Co-funded by the
Tempus Programme
of the European Union

ARARAT

ԵՄ ՏԵՄՊՈՒՍ ծրագրի աջակցությամբ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ-ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱ ԱԶԳԱՅԻՆ ՑԱՆՑԻ (ՀԱԱՑ) ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ

ARARAT

ԱՐԱՐԱՏ

«Համալսարան-գործատու»
հայկական համակարգող գործակալություն

www.ararattempus.org

Այս ծրագիրը ֆինանսավորվել է Եվրոպական Հանձնաժողովի աջակցությամբ: Սույն հրատարակությունը արտացոլում է միայն հեղինակների տեսակետները, և Հանձնաժողովը պատասխանատվություն չի կրում դրանում պարունակվող տեղեկատվության օգտագործման համար:

«Համալսարան-գործատու» հայկական համակարգող գործակալություն

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ-ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱ ԱԶԳԱՅԻՆ ՑԱՆՑԻ (ՀԱԱՑ) ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ

Co-funded by the
Tempus Programme
of the European Union

Այս ծրագիրը ֆինանսավորվել է Եվրոպական Հանձնաժողովի աջակցությամբ: Սույն հրատարակությունը արտացոլում է միայն հեղինակների տեսակետները, և Հանձնաժողովը պատասխանատվություն չի կրում դրանում պարունակվող տեղեկատվության օգտագործման համար:

Co-funded by the
Tempus Programme
of the European Union

Բովանդակություն

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ – ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՑԱՆՑԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 4
2. ՀԱԱՑ..... 4
3. ՈԼՈՐՏԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ 5
4. ՈԼՈՐՏԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ 6
5. ՈԼՈՐՏԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 5
6. ՈԼՈՐՏԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 9
7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄԸ ԵՎ ՎԱՐՔԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ.....10
8. ՔՎՈՐՈՒՄ ԵՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ 11
9. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄ ԵՎ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ 12
10. ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԽՄԲԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....13
11. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԽՄԲԵՐ.....13
12. ՀԱՄԱԼՍԱՐԱՆ-ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱ ԿԱՊԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆԵՐՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ (ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ).....14
13. ԿՐԹԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ.....15

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ-ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՑԱՆՑԻ (ՀԱԱՑ) ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀԱԱՑ-Ի ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 16

ՀԱԱՑ-Ի ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ.....18

ՀԱԱՑ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 20

ՀԱՎԵԼՎԱԾ 1 21

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ
«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ – ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՑԱՆՑԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Կարևորելով ՀՀ մասնագիտական կրթության ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրմանչափանիշների համապատասխանությունը ՀՀ որակավորումների ազգային շրջանակին (այսուհետ՝ ՈԱՇ), բարձրագույն կրթության ոլորտում Որակի ապահովման Եվրոպական ասոցիացիայի (ENQA) կրթական չափանիշներին, ինչպես նաև մասնագիտական ոլորտների նկարագրությանը և աշխատաշուկայի պահանջներին՝ «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամը» (ասյուհետ՝ ՈԱԱԿ) ձևավորում է Համալսարան-աշխատաշուկա ՀՀ ազգային ցանցը (այսուհետ՝ ՀԱԱՑ):

1.2 Հետապնդելով բարձրագույն կրթության շարունակական բարելավման և զարգացման նպատակ՝ սույն Կանոնակարգով նախատեսվում է Ոլորտային հանձնաժողովների ստեղծումը:

2. ՀԱԱՑ

2.1 ՀԱԱՑ-ը մշակվել է Եվրոպական Միության Տեմպուսի «Համալսարան-գործատու հայկական համակարգող գործակալություն» («Արարատ», №-530321-TEMPUS-1-2012-1-AM-TEMPUS-SMHES) ծրագրի շրջանակներում, որի նպատակն է աշխատաշուկայի պահանջներին համապատասխան ՀՀ բարձրագույն կրթության արդիականացումը:

2.2 ՀԱԱՑ-ը տվյալների հավաքագրման, ներդրման, մշակման և պահպանմանհամակարգ է, որը ծառայում է բարձրագույն ուսումնական հաստատություններից և աշխատաշուկայից մարդկային ռեսուրսների պատրաստման և վերջիններիս իմացության օգտագործման մասին պարբերաբար տեղեկատվության ստացման ու ուսումնական գործընթացի շարունակական բարելավմանը միտված վերլուծություններ իրականացնելու համար:

2.3 ՀԱԱՑ-ի աշխատանքները համակարգվում են ՈԱԱԿ-ի համապատասխան մասնագետների՝ Ծրագրի համակարգման խմբի կողմից:

2.4 ՀԱԱՑ-ի գործունեությունը ապահովում են՝

- ✓ Ոլորտային հանձնաժողովները
- ✓ Ծրագրի համակարգման խումբը
- ✓ Հետազոտական խմբերը
- ✓ Համալսարան-աշխատաշուկա համագործակցության միավորները:

3. ՈԼՈՐՏԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ

3.1 Իրականացնումենորակավորումներիոլորտային շրջանակների ռազմավարության մշակումը՝ ապահովելով ՈԱՇ-ի, հավատարմագրման չափանիշների և մասնագիտական կրթական ծրագրերի համապատասխանությունը տվյալ ոլորտիզարգացման միտումներին ու գործատուների և, ընդհանուր առմամբ, հանրության պահանջներին:

3.2 Ոլորտային հանձնաժողովների կազմի մեջ ընդգրկվում են տվյալ ոլորտի մասնագետներ (փորձագետներ) և պետական կառավարման մարմինների ու մասնավոր հատվածի ներկայացուցիչներ՝ գործատուներ:

3.3 Սահմանում են հետազոտությունների ոլորտները, առաջնահերթությունները և քննարկում ու հաստատում Հետազոտական խմբերի կողմից կատարված հետազոտությունների արդյունքները:

3.4 Ներկայացում են առաջարկություններ են Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը (այսուհետ՝ ՀՀ ԿԳՆ) հավատարմագրման չափանիշներում և ՈԱԾ-ում փոփոխություններ կատարելու վերաբերյալ՝ ելնելով հետազոտությունների արդյունքներից:

3.5 Պատրաստում են ոլորտային ՈԱԾ-ների նախագծեր, դրանք ներկայացնում ՀՀ ԿԳՆ քննարկմանը և հաստատմանը:

3.6 Ձևավորում են և պարբերաբար թարմացնում ոլորտի փորձագետների բազան՝ ՈԱԱԿ-ի կողմից ծրագրային հավատարմագրում և համապատասխան ոլորտում այլ հետազոտություններ կատարելու նպատակով անհրաժեշտ փորձագետների ընտրության համար:

4. ՈԼՈՐՏԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Յուրաքանչյուր հանձնաժողով բաղկացած է 8-10 անդամներից:

4.2 Յուրաքանչյուր հանձնաժողովում ընդգրկված են.

1) Համապատասխան ոլորտի ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի հետազոտական ինստիտուտների 2 ներկայացուցիչ,
2) Համապատասխան ոլորտում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող բարձրագույն ուսումնական հաստատության՝ կրթական ծրագրի մշակման համար պատասխանատու վարչական անձնակազմի 2-3 ներկայացուցիչ,
3) Համապատասխան ոլորտի հիմնական գործատուների 2-3 ներկայացուցիչ,

4) Համապատասխան ոլորտի մասնագիտական դասընթացներ դասավանդողների 2 ներկայացուցիչ:

4.3 Հանձնաժողովի կազմի լիազորությունների ժամկետը 3 տարի է:

4.4 Հանձնաժողովի անդամների թեկնածություններն առաջադրում են բարձրագույն ուսումնական հաստատությունները, գործատուների և այլ մասնագիտական միությունները:

4.5 Հանձնաժողովի վերջնական կազմը և նրանում կատարվող փոփոխությունները հաստատվում են ՈԱԱԿ-ի Հավատարմագրման հանձնաժողովի որոշմամբ:

4.6 Անդրանիկ նիստի ժամանակ Հանձնաժողովի անդամների կազմից ընտրվում է հանձնաժողովի նախագահը:

4.7 Հանձնաժողովի անդամների և ՈԱԱԿ-ի միջև կնքվում է պայմանագիր:

4.8 Հանձնաժողովի անդամիլիազորություններըկարողենդադար եցվել.

1) հանձնաժողովի անդամիդիմումիհամաձայն,
2) հանձնաժողովի անդամիանգործությանհիմնավորմամբ,
3) հանձնաժողովի անդամի կողմից գաղտնիության պարտավորագրի պայմանների խախտման դեպքում,
4) հանձնաժողովի անդամի մահվանդեպքում:

4.9 Հանձնաժողովի անդամի թափուր տեղը համալրվում է մեկամսյա ժամկետում՝ սույն կանոնակարգով:

4.10 Հանձնաժողովից դուրս գալ ցանկացող անդամը Հանձնաժողովի նախագահին դիմում ներկայացնելուց հետո շարունակում է իրականացնել իր պարտականությունները մինչև նոր անդամի նշանակումը:

4.11 ՈԱԱԿ-ի Հավատարմագրման հանձնաժողովը կարող է լուծարել Ոլորտային հանձնաժողովը, եթե այն անգործունակ կամ անարդյունավետ է իրականացնում սույն կանոնակարգով սահմանած իր պարտականությունները:

5. ՈԼՈՐՏԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1 Ոլորտի հետազոտությունների ռազմավարական ուղղությունների և ժամանակացույցի մշակում:

5.2 Ծրագրի համակարգման խմբի հետ համատեղ հետազոտության շրջանակի սահմանում՝ ներառյալ գործողությունների պլանի մշակումը:

5.3 Հետազոտությունների իրականացման համար Հետազոտական խմբերի ձևավորում:

5.4 Ծրագրի համակարգման խմբի հետ համատեղ Հետազոտական խմբերի աշխատանքների համակարգում:

5.5 Կատարված հետազոտությունների արդյունքների վերլուծություն:

5.6 Ոլորտի հետազոտությունների իրականացման գործընթացի կառավարում և որակի վերահսկում սահմանված քաղաքականությանը և գործառույթներին համապատասխանությունն ապահովելու համար:

5.7 Հետազոտությունների արդյունքների ամփոփում և ներկայացում Հավատարմագրման հանձնաժողովի հաստատմանը՝ հաշվի առնելով Ծրագրի համակարգման խմբի կարծիքը

5.8 Ոլորտի փորձագետների բազայի ձևավորում և պարբերաբար թարմացում՝ բազայում ներառելով փորձագետների վերաբերյալ անհրաժեշտ բոլոր տվյալները:

5.9 ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպված հավատարմագրման գործընթացները համակարգողների հարցմանն ի պատասխան փորձագետների բազայից փորձագիտական խմբի անդամների թեկնածությունների տրամադրում:

5.10 Ըստ ոլորտների հավատարմագրման փորձագիտական խմբերի կողմից պատրաստված զեկույցների վերլուծության իրականացում:

5.11 Ոլորտում այլ հետազոտությունների իրականացման համար ժամանակավոր աշխատանքային խմբերի ձևավորում:

6. ՈԼՈՐՏԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6.1 Ոլորտային հանձնաժողովի անդամը պետք է տեղեկացված լինի.

1) ՀՀ ՈԱՇ-ի և տվյալ ոլորտի մասնագիտական կրթական ծրագրերի մասին,
2) Համապատասխան ոլորտում առկա կարիքների և զարգացման միտումների մասին,
3) Աշխատաշուկայի համապատասխան հատվածում տեղի ունեցող փոփոխությունների մասին,
4) Բարձրագույն կրթական համակարգի մասին:

6.2 Ոլորտային հանձնաժողովի անդամը պետք է.

1) լինի վստահելի ՈԱԱԿ-ի, տվյալ ոլորտի գործատուների և այլ շահակիցների համար,
2) ունենա խորը գիտելիքներ համապատասխան ոլորտում և աշխատանքային փորձ,
3) ունենա թիմային աշխատանքի կարողություններ, պատրաստ լինի ակտիվ քննարկումների և համաձայնության գալու,
4) ունենա առաջնորդության կարողություններ,
5) լինի համապատասխան ոլորտի փորձագետ, հասկանա հետազոտությունների նպատակները և հետամուտ լինի հետազոտության արդյունավետ իրականացմանը,
6) հանդես գա որպես անկախ մասնագետ:

6.3 Ոլորտային հանձնաժողովի նախագահը պատասխանատու է.

1) հանձնաժողովի արդյունավետ գործունեության համար,
2) հանդիպումների կազմակերպման և անցկացման արդյունավետության ապահովման համար,

3) հանդիպումների օրակարգերի և այլ անհրաժեշտ փաստաթղթերի պատրաստման համար,
4) հանդիպումների ժամանակացույցի և արձանագրությունների կազմման համար,
5) հետազոտությունների փաստաթղթավորման համար,
6) հետադարձ կապով ստացված արդյունքների վերլուծմության համար:

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄԸ ԵՎ ՎԱՐՔԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

7.1 Հանդիպումները պետք է լինեն՝

1) ինտերակտիվ,
2) կենտրոնացած վերջնարդյունքների վրա,
3) ուղղված համատեղ որոշումների կայացմանը,
4) կառուցողական,
5) բաց և հանդուրժողական:

7.2 Ոլորտային հանձնաժողովների հանդիպումներն արձանագրվում են: Հանձնաժողովի անդամը կարող է ցանկություն հայտնել, որ իր արտահայտած կարծիքը հատուկ մտցվի արձանագրության մեջ:

7.3 Արձանագրությունները պետք է հասանելի լինեն բոլոր շահակիցների համար:

7.4 Նիստերի արձանագրությունները ստորագրվում են հանձնաժողովի բոլոր անդամների կողմից: Արձանագրությունները պահվում են հանձնաժողովի նախագահի մոտ: Հանձնաժողովի գործունեության ժամկետը լրանալուց հետո արձանագրությունները հանձնվում են Ծրագրի համակարգման խմբին:

7.5 Հանձնաժողովի անդամները անկախ տարիքից, սեռից, կրթությունից, զբաղվածության կարգավիճակից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքականկամայլհայացքներից, ազգայինփոքրամասնությանըպատկանելությունիցկամ այլ հանգամանքից հավասար են և ազատորեն կարող են արտահայտել իրենց կարծիքը:

7.6 Յուրաքանչյուր անդամ իր առջև դրված խնդիրների իրականացման ընթացքում խոչընդոտների առաջացման դեպքում կարող է դիմել հանձնաժողովի նախագահին և Ծրագրի համակարգման խմբին:

7.7 Հանձնաժողովի նախագահի և Ծրագրի համակարգման խմբի հիմնավոր կարծիքով հանձնաժողովի անդամը կարող է հեռացվել հանձնաժողովի կազմից, եթե խախտել է վարքի սույն կանոնները:

7.8 Խնդիրը Հանձնաժողովի նախագահի և Ծրագրի համակարգման խմբի կողմից պատշաճ մակարդակով չլուծվելու դեպքում այն կարող է ներկայացվել Հավատարմագրման հանձնաժողով, որն իրավասու է դադարեցնել Ոլորտային հանձնաժողովի անդամի լիազորությունները:

8. ՔՎՈՐՈՒՄ ԵՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

8.1 Քվորումը ապահովված է համարվում հանձնաժողովի անդամների ¾-ի ներկայության դեպքում:

8.2 Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը որոշիչ է:

8.3 Ոլորտային հանձնաժողովների հանդիպումներին խորհրդակցական ձայնով կարող են մասնակցել Ծրագրի համակարգման խմբի անդամները, առանց ձայնի իրավունքի՝ շահակիցների ներկայացուցիչները և Ոլորտային հանձնաժողովի կողմից հրավիրված այլ անձինք:

9. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄ ԵՎ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

9.1 Հանձնաժողովների բոլոր անդամների կողմից ստորագրվում է շահերի բախման հայտարարագիր:

9.2 Շահերի բախման առաջացման դեպքում հանձնաժողովի անդամը պետք է տեղեկացնի Հանձնաժողովի նախագահին և Ծրագրի համակարգման խմբին:

9.3 Շահերի բախման առկայության և այն չհայտարարագրելու դեպքում հանձնաժողովի անդամը կարող է անհապաղ հեռացվել հանձնաժողովից:

10. ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԽՄԲԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ծրագրի համակարգման խմբի անդամները պետք է.

1) մշակեն Ոլորտային հանձնաժողովների գործողությունների տարեկան պլանի նախագծերը և Ոլորտային հանձնաժողովների նախագահների հետ համաձայնեցնելուց հետո ներկայացնեն ՈԱԱԿ-ի Հավատարմագրման հանձնաժողովի հաստատմանը,
2) մշակեն ՀԱԱՑ-ի գործողությունների տարեկան պլանի նախագիծը և Ոլորտային հանձնաժողովների նախագահների հետ համաձայնեցնելուց հետո ներկայացնեն Հավատարմագրման հանձնաժողովի հաստատմանը,
3) իրականացնեն Ոլորտային հանձնաժողովների և ՀԱԱՑ-ի տարեկան պլանների կատարման մշտադիտարկում և քննարկում համապատասխան գործընթացի պատասխանատուի հետ,
4) համակարգենՀետազոտական խմբերի աշխատանքները Ոլորտային հանձնաժողովների հետ համատեղ,
5) համակարգեն ՀԱԱՑ-ի տեխնիկական սպասարկման և հարցա-

շարերի մշակման խմբի (անձնակազմի) աշխատանքները,

6) մշակեն և ապահովեն ՀԱԱՑ-ի տեխնիկական սպասարկման և հարցաշարերի մշակման խմբի (անձնակազմի) և Համալսարան-աշխատաշուկա կապի ապահովման ներհամալսարանական միավորների արդյունավետ համագործակցության մեխանիզմները,

7) ապահովեն Ոլորտային հանձնաժողովների, Հետազոտական խմբերի և Համալսարան-աշխատաշուկա կապի ապահովման ներհամալսարանական միավորների արդյունավետ համագործակցությունը:

11. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԽՄԲԵՐ

11.1 Անհրաժեշտության դեպքում, որոշակի հետազոտությունների կատարման համար, Ոլորտային հանձնաժողովը կարող է ձևավորել մասնագիտական հետազոտական խումբ/խմբեր:

11.2 Աշխատանքային խմբերը ձևավորվում են Ոլորտային հանձնաժողովի կողմից՝ Ծրագրի համակարգման խմբի հետ նախապես քննարկելուց հետո:

11.3 Նախքան Հետազոտական խմբի ձևավորումը՝ Ոլորտային հանձնաժողովը պետք է սահմանի հետազոտության շահակիցների շրջանակը և խմբի աշխատանքի նկարագիրը:

11.4 Հետազոտական խմբի աշխատանքային նկարագրում պետք է հստակ նշված լինեն հետազոտության ակնկալվող վերջնարդյունքները, հետազոտական խմբի անդամների ընտրության ընթացակարգը և չափանիշները՝ ներառյալ անդամների գիտելիքներին, կարողություններին և հմտություններին ներկայացվող պահանջները:

11.5 Ծրագրի համակարգման խումբը կարող է Ոլորտային հանձնաժողովի կողմից չնախատեսված մասնագետների, գործատուների

և այլ շահակիցների հետ խորհրդատվություն տրամադրել հետազոտությանկամ դրա որևէ հատվածի իրականացման համար:

12. ՀԱՄԱԼՍԱՐԱՆ-ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱ ԿԱՊԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆԵՐՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ (ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ)

12.1 ՀԱԱՑ-ի հետ համագործակցող յուրաքանչյուր Համալսարան ունենում է համալսարան-աշխատաշուկա կապի ապահովման ներհամալսարանական միավոր:

12.2 Միավորը ունի ՈԱԱԿ-ի հետ մշտապես համագործակցող պատասխանատու:

12.3 Միավորը իրականացնում է հետևյալ հիմնական գործառույթները՝

1) ԲՈՒՀ-գործատու կապի զարգացման ապահովում և այդ ուղղությամբ ՈԱԱԿ-ին աջակցության տրամադրում:
2) Գործատու կազմակերպությունների մասնագիտական կարիքների բացահայտում և վերլուծում, հանդիպումների կազմակերպում գործատուների, ուսանողների, դասախոսների և համալսարանի ղեկավար մարմինների հետ: Վերջնական արդյունքների և տվյալների տրամադրում ՈԱԱԿ-ին:
3) Հետադարձ կապի ապահովում համալսարան-ուսանող-գործատու-ՈԱԱԿ ձևաչափով:
4) Այլ գործառույթների իրականացում, որոնք կնպաստեն մասնագիտական շուկայի կարիքների բավարարմանը, համալսարան-աշխատաշուկա կապի ամրապնդմանը և ՈԱԱԿ-ի հետ հարաբերությունների զարգացմանն ու խորացմանը:
5) Հետազոտությանը նպաստող նախնական տվյալների հավաքագրում ըստ անհրաժեշտության և տրամադրում պահանջվող ձևաչափերով:

6) Պարզաբանող աշխատանքների իրականացում շահակիցների հետ հաղորդակցական վստահության և շահագրգռվածության միջավայրի ձևավորման նպատակով:

13. ԿՐԹԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

Ոլորտային հանձնաժողովները ձևավորվել են բարձրագույն կրթության մասնագիտական ոլորտների և հաստատությունների ինստիտուցիոնալ կառավարման ուղղություններով: Ըստ այդմ ոլորտային հանձնաժողովներ են՝

1. Կրթության հանձնաժողով
2. Հումանիտար գիտությունների և արվեստի հանձնաժողով
3. Սոցիալական գիտությունների, լրագրության և տեղեկատվական գիտությունների հանձնաժողով
4. Գործարարության, վարչարարության և իրավունքի հանձնաժողով
5. Բնական գիտությունների, մաթեմատիկայի և վիճակագրության հանձնաժողով,
6. Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների հանձնաժողով
7. Ճարտարագիտության, արդյունաբերության և շինարարության հանձնաժողով
8. Գյուղատնտեսության, անտառայինտնտեսության, ձկնայինտ նտեսությանեվանասնաբուժության հանձնաժողով
9. Առողջապահության և սոցիալական աշխատանքի հանձնաժողով
10. Ծառայությունների հանձնաժողով:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ-ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՑԱՆՑԻ (ՀԱԱՑ) ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀԱԱՑ-Ի ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Բարձրագույն կրթության ոլորտում Որակի ապահովման Եվրոպական ասոցիացիայի (ENQA) և ՀՀ Մասնագիտական կրթության ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման չափանիշներում կարևորվում է իրականացվող կրթական ծրագրերի համապատասխանությունը ՀՀ որակավորումների ազգային շրջանակին (այսուհետ՝ ՈԱՇ), մասնագիտական ոլորտների նկարագրությանը և աշխատաշուկայի պահանջներին: Կրթական ծրագրերի համապատասխանեցումը մասնագիտական ոլորտների նկարագրությանն ու աշխատաշուկայի հարատև փոփոխվող պահանջներին շարունակական գործընթաց է, որը առաջին հերթին ենթադրում է այդ ոլորտների մանրակրկիտ հետազոտություն: Հետազոտությունները պետք է կատարվեն մասնագետների պատրաստման բոլոր ոլորտներում ու փուլերում և բարձրագույն մասնագիտական կրթության բոլոր մակարդակներում:

Հետազոտությունների հիմնական նպատակն է պակասեցնել շնորհվող որակավորումների կրկնությունները և հավաստել, որ որակավորումներն արդիական են, համապատասխանում են տվյալ ոլորտի աշխատաշուկայի կարիքներին ու պահանջներին և համահունչ են ՈԱՇ-ին: Այսպիսի հետազոտությունները կնպաստեն Ոլորտային ՈԱՇ-ների սահմանմանը, բարձրագույն կրթության շարունակական բարելավմաննու զարգացմանը՝ բուհերի համար հանդիսանալով կրթական ծրագրերի բարելավման ուղենիշ (benchmark), ինչպես նաև կօժանդակեն Հավատարմագրման հանձնաժողովին բուհի կամ մասնագիտական կրթական ծրագրի հավատարմագրման մասին անաչառ որոշում կայացնելու մեջ:

Մասնագիտական ոլորտների մանրակրկիտ ուսումնասիրությունը նախատեսում է մեծածավալ աշխատանք կապված ՀՀ աշխատաշուկայի խոշոր, միջին և մանր գործատուների կարիքների ու պահանջների, տվյալ ոլորտի զարգացման միտումների և կրթական ծառայություններ տրամադրողուսումնական հաստատությունների հնարավորությունների վերհանման հետ:

Այս նպատակներին հասնելու համար, Եվրոպական Միության Տեմպուսի «Համալսարան-գործատու հայկական համակարգող գործակալություն» («ԱՐԱՐԱՏ», №-530321-TEMPUS-1-2012-1-AM-TEMPUS-SMHES) ծրագրի շրջանակներում ստեղծվել է Համալսարան–աշխատաշուկա ՀՀ ազգային ցանցը (այսուհետ՝ ՀԱԱՑ):

ՀԱԱՑ-ն հանդիսանում է տվյալների հավաքագրման, ներդրման, մշակման և պահպանման համակարգ: Այս համակարգը ապահովում է ուսումնական հաստատություններից և աշխատաշուկայից տեղեկատվության ստացումը և ստացված տվյալների խմբավորումը՝ դյուրացնելով տվյալների վերլուծությունը:

ՀԱԱՑ-ը տեղակայված է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամում (այսուհետ՝ ՈԱԱԿ) և դրա աշխատանքները համակարգվում են ՈԱԱԿ-ի համապատասխան մասնագետների՝ **Ծրագրի համակարգման խմբի** կողմից:

Հետազոտական առաջնահերթությունների և անհրաժեշտության սահմանումը, կազմակերպումը, Ոլորտային ՈԱԾ-ների և դրանց հետագա փոփոխությունների հաստատումը կիրականացնեն ՈԱԱԿ-ի կողմից ձևավորված **Ոլորտային հանձնաժողովները**: Իսկ ոլորտների ներսում տարբեր մասնագիտական ուղղություններովհետազոտությունները կիրականացնեն Ոլորտային հանձնաժողովների կողմից խիստ որոշակի հետազոտությունների իրականացման նպատակով ստեղծված **Հետազոտական խմբերը**:

ՀԱԱՑ-Ի ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ՀԱԱՑ-ի գործունեությունը ապահովում են հետևյալ միավորները՝

ա) Ոլորտային հանձնաժողովները,

բ) Ծրագրի համակարգման խումբը,

գ) Հետազոտական խմբերը,

դ) Համալսարան-աշխատաշուկա համագործակցության միավորները:

ՀԱԱՑ-ի կառավարման և գործարկման գծապատկերները բերված են հավելված 1-ում:

Ոլորտային հանձնաժողովները ձևավորվում են տվյալ ոլորտի մասնագետներից (փորձագետներից) և պետական կառավարման մարմինների ու մասնավոր հատվածի ներկայացուցիչներից՝ գործատուներից: Ոլորտային հանձնաժողովները սահմանում են հետազոտությունների ոլորտները, առաջնահերթությունները և քննարկում ու հաստատում Հետազոտական խմբերի կողմից կատարված հետազոտությունների արդյունքները: Կազմված լինելով տվյալ ոլորտի առաջավոր, ոլորտին և ոլորտում աշխատող մասնագետներին քաջատեղյակ անդամներից՝ Ոլորտային հանձնաժողովները կձևավորեն և պարբերաբար կթարմացնեն ոլորտի փորձագետների բազան:

Ծրագրի համակարգման խումբը համակարգում է Ոլորտային հանձնաժողովի և Հետազոտական խմբերի գործունեությունը՝ մշակելով գործողությունների տարեկան պլաններ և համաձայնեցնելով դրանք ներգրավված մյուս միավորների հետ, ինչպես նաև իրականացնում Համալսարան-աշխատաշուկա կապի ապահովման ներհամալսարանական միավորների կողմից տվյալների մուտքագրման գործընթացի մշտադիտարկում և խնդիրների դեպքում դրանք ներկայացնում է պատասխանատուներին:

Հետազոտական խմբերը ձևավորվում են Ոլորտային հանձնաժողովների կողմից և միտված են տվյալ ոլորտի կամ դրա մեջ մտնող

ուղղությունների կոնկրետ խնդիրների հետազոտության իրականացմանը: Այս խմբերը ձևավորվում են միայն հետազոտության նպատակների և շահակիցների հստակ սահմանումից հետո: Այս մոտեցումը թույլ է տալիս ներգրավել հետազոտության նպատակներին համապատասխան մասնագետներ:

Համալսարան-աշխատաշուկա համագործակցության միավորներն ապահովում են համապատասխան ոլորտի գործատուների և այլ հիմնական շահակիցների (պրոֆեսորադասախոսական անձնակազմ, շրջանավարտներ, ուսանողներ և այլն) դուրսբերումը, ցուցակագրումը, նրանց հետ կապի հաստատումը և պահպանումը, ինչպես նաև նրանց կողմից ՀԱԱՑ-ի էլեկտրոնային հարցաշարի լրացումը:

ՀԱԱՑ-ի գործունեությունը ապահովող միավորները իրենց իրավասությունների տեսանկյունից փոխկապակցված են և հանդես են գալիս որպես մեկ ընդհանուր միավոր՝ ՀԱԱՑ: Դրանց փոխհամաձայնեցված գործունեությունը ապահովվում է Ծրագրի համակարգման խմբի միջոցով: Արդյուքում՝ ոլորտային հանձնաժողովները ստանձնում են հետազոտական հիմնական ուղղությունների սահմանման և հետագայում դրանց արդյունքների հաստատման պատասխանատվությունը: Համալսարան-աշխատաշուկա կապի ապահովման ներհամալսարանական միավորները, հետազոտական և համակարգման խմբերը պատասխանատվություն են կրում հետազոտությունների իրականացման համար:

Անկախ հետազոտության տեսակից, հիմնական նպատակը ոլորտի զարացումն է: Այդ պատճառով ոլորտային հետազոտությունները իրականացվելու են ինչպես որակավորումների ոլորտային շրջանակի սահմանման, այնպես էլ ոլորտի հմտությունների զարգացման և ձևավորման քաղաքականություն մշակելու համար:

ՀԱԱՑ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀԱԱՑ-ը աշխատելու է ոլորտային 10 հանձնաժողովների հետ համատեղ: Այդ աշխատանքները ընդգրկելու են որակավորումների ոլորտային շրջանակի մշակմանը ուղղված հետազոտություններից մինչև հմտությունների, կրթական, կրթության որակի ապահովման քաղաքականությանը նպաստող հետազոտություններ:

Նշված հետազոտությունների մի մասը իրականացվել է Եվրոպական Միության Տեմպուսի «Համալսարան-գործատու հայկական համակարգող գործակալություն» («ԱՐԱՐԱՏ», №-530321-TEMPUS-1-2012-1-AM-TEMPUS-SMHES)ծրագրի շրջանակներում: Մասնավորապես մշակվել են 3 ոլորտներ նկարագրող որակավորումների շրջանակներ: Մշակվել է որակավորումների ոլորտային շրջանակների մշակման մեթոդաբանությունը: Այս աշխատանքը նպաստել է որակավորումների ոլորտային շրջանակների սահմանմանու մշակման համար հետազոտական աշխատանքներ կատարելու կարողությունների զարգացմանը: Վերջինը էական նշանակություն ունի ՈԱԱԿ-ի համար, քանի որ հետազոտությունը կենտրոնական տեղ է զբաղեցնում վերջինիս գործունեության մեջ:

Կարողությունների զարգացման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի նաև նույն ծրագրի շրջանակներում ստեղծված առցանց հարցաշարերի պլատֆորմը: Այն թույլ է տալիս հարցումներ անել շահակիցների լայն շրջանակներում և ստեղծել այդ հարցումների տվյալների բազա:

Այսպիսով, ՀԱԱՑ-ը հնարավորություն է տալիս համալիր հետազոտական աշխատանքներ իրականացնել կրթական տարբեր խնդիրների վերաբերյալ: Ավելին, համագործակցելով անյպիսի միավորների հետ, ինչպիսին ոլորտային հանձնաժողովները կամ ՈԱԱԿ-ն է, այն հնարավորություն է ընձեռում արված հետազոտությունները դնել կիրառության մեջ:

ՀԱՎԵԼՎԱԾ 1


Ոլորտային
հանձնաժողովներ
Հավատարմագրման
հանձնաժողով
Հետազոտական
խմբեր
Համալսարան-աշխատաշուկա
համագործակցության միավորներ
Նրանցի համակարգմանխնամք

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ